ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

_____________ ֆակուլտետի խորհրդի

____ նիստում

"_____"__________2021 թ.

________________

# ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

## I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:**

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2021 թվականի գործունեությունն ուղղված է եղել համալսարանի հիմնական առաքելության, այն է՝ մանկավարժության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների և արվեստի ոլորտներում ՀՀ և միջազգային աշխատաշուկայում մրցունակ, մասնագիտական կայուն գիտելիքներով, սոցիալական պատասխանատվությամբ և ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող մասնագետների պատրաստմանը, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի միջոցով կիրառական հմտություններով և կարողություններով զինված գիտելիքի ստեղծմանն ու հանրային ոլորտում մասնագիտական արժեքների տարածմանը:

2021 թվականին աշխատանքներն իրականացվել են համաձայն 2021-2025 զարգացման ռազմավարական ծրագրի 2021 թվականի գործողությունների պլանի: Ռազմավարական <u>1-ին ուղղության՝</u> Կրթական գործունեության հիմնական նպատակների և խնդիրների ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները: Մասնավորապես՝

Ռազմավարական ուղղություն 1. Կրթական գործունեություն

- ☐ Ուսումնական տարվա սկզբին քննարկվել և արդիականացվել են կրթական ծրագրերի բաղադրիչ հանդիսացող դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները՝ հաշվի առնելով ՊԴԱ ներկայացրած կոնկրետ դասընթացի առանձնահատկությունները և հիմնավորումները:
- ☐ Հստակեցվել են դասընթացների շրջանակներում ուսանողների գնահատման գործիքակազմը և չափանիշները
- ☐ Ապահովվել է ուսանողների կողմից դասընթացների ընտրության լայն հնարավորություններ, մասնավորապես՝ մագիստրոսական կրթական ծրագրերի ընտրովի դասընթացներում
- ☐ Հնարավորինս ապահովվել է ուսանողների ակտիվ մասնակցությունն իրենց անհատական ուսումնառության գործընթացի պլանավորմանը, կազմակերպվել են խմբային և անհատական խորհրդատվություններ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂԻԹՅՈՒՆ 2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- ☐ Իրականացվել են համալսարանի և ֆակուլտետի առաքելությունից բխող գիտական ուղղությունները՝ մանկավարժություն, հոգեբանություն, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք
- ☐ Քննարկվել են մագիստրոսական, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների որակի բարձրացման հարցերը:
- ☐ Իրականացվել են դպրոց-բուհ գիտական կապի ամրապնդման և արդյունավետության բարձրացման քայլեր, մասնավորապես՝ մասնագիտական, մանկավարժական պրակտիկաների գործընթացում:
- ☐ Ապահովվել է ՊԴԱ-ին տեղեկատվության փոխանցման գործընթացը՝ ի նպաստ ֆակուլտետի ՊԴԱ-ի հոդվածների հրատարակմանը միջազգային *Scopus* և *Web of Science* շտեմարաններում:
- ☐ Իրականացվել են միջազգային գիտական կառույցների հետ համագործակցության ընդլայնման աշխատանքներ /տես՝ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ/:
- ☐ ֆակուլտետը նպաստել է գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը՝ արդյունավետ և ժամանակակից ձևաչափով՝ ապահովելով երիտասարդ մասնագետների թեկնածուական ատենախոսությունների պատրաստման գործընթացը:
- ☐ Ֆակուլտետի ՊԴԱ-ը մասնակցել է վերապատրաստման գործընթացներին, համալսարանի վերապատրաստման և որակավորումների բարձրացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերին, արտաքին գործընկերների հետ համատեղ վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացներին /Տես՝ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ, ինչպես նաև ամբիոնների տարեկան հաշվետվություններ/:
- ☐ Խրախուսվել է ՊԴԱ հրատարակման ակտիվությունը հեղինակավոր, հատկապես միջազգային վարկանիշային ամսագրերում՝ նաև հետազոտական արդյունքների պարանքայնացման նպատակով:

Ռազմավարական ուղղություն 3.Կառավարման գործընթացներ

- ☐ Համալսարանի և ֆակուլտետի կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների հրապարակայնությունը, հասանելիությունը և մատչելիությունը բոլոր շահառուների համար ապահովելու նպատակով ֆակուլտետի խորհրդում ներգրավվել են ներքին և արտաքին շահառուներ, ոլորտի առաջատար մասնագետներ:
- ☐ Ֆակուլտետի վարչական կազմը և ամբիոնների մասնագետները մասնակցել են Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության "Mulberry" համակարգի ներդրման վերապատրաստման դասընթացներին:

Ռազմավարական ուղղություն 4.Դիմորդներ, ուսումնառողներ և նրա կարիերայի կառավարում

- ☐ Նոր մարտահրավերների պայմաններում կիրառվել են դիմորդների մասնագիտական կողմնորոշման իրականացման նոր մեխանիզմներ, ձևեր, հնարներ առցանց ձևաչափով՝ · առցանց հանդիպումներ դպրոցների հետ, անհատական խորհրդատվություններ, ֆակուլտետի մասնագիտությունների լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով:
- ☐ Իրականացվել են ֆակուլտետի ուսումնառողների շարժի վերլուծություններ
- ☐ Ֆակուլտետի ուսանողները ընդգրկվել են ամբիոնների գերակա գիտահետազոտական աշխատանքների մեջ, մասնակցել են գիտաժողովների, վերապատրաստումների, դասախոսների հետ համատեղ հրատարակել են հոդվածներ, իրականացրել մասնագիտական հետազոտական աշխատանքներ այլ կառույցների հետ:

- ☐ Իրականացվել են ֆակուլտետ-գործատու համագործակցության և ուսումնառողների կարիերայի ապահովման աշխատանքներ /ուսանողներին աշխատանքով ապահովելու կոնկրետ քայլեր/
- ☐ Կնքվել են հուշագրեր և պայմանագրեր գործատուների հետ՝ ուսանողների մասնագիտական պրակտիկան կազմակերպելու և հետագա կարիերան ապահովելու նպատակով

Ռազմավարական ուղղություն 5.ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ☐ Ֆակուլտետը աջակցել է դասախոսական կազմին դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության աշխատանքներում /2 դասախոս անցել են նախապաշտպանություն և պատրաստվում են թեկնածուական ատենախոսությունների հրապարակային պաշտպանության/:

Ռազմավարական ուղղություն 6. Ֆինանսական գործունեություն

- ☐ Ֆակուլտետը չունի ինքնուրույն ֆինանսավորում: Սակայն իրականացվել է ֆակուլտետի, ամբիոնների հնարավորությունների վերլուծություն, ինչի արդյունքում մեկնարկել է որոշակի ֆինանսական ռեսուրսներ հայթայթելու ծրագրերի քննարկման և մշակման գործընթացը՝ դրամաշնորհային ծրագրերի ուսումնասիրություն, հետազոտական ծրագրերի քննարկում, գիտահետազոտական լաբորատորիայի ապահովում, լրացուցիչ կրթական ծրագրերի տրամադրում և այլն:

Ռազմավարական ուղղություն 7.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

- ☐ Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին իրականացվում է ֆակուլտետի նյութատեխնիկական ռեսուրսների բավարարվածության և արդյունավետության աստիճանի վերլուծություն՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների, որի արդյունքները ներկայացվում են համալսարանի ղեկավարությանը: Արդյունքում՝ հնարավորինս տրամադրվում է անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները:

Ռազմավարական ուղղություն 8. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ☐ Ֆակուլտետը Համագործակցել է համալսարանի լրատվության բաժնի հետ՝ ֆակուլտետի վերաբերյալ օպերատիվ լրատվության և գովազդային նյութերի տրամադրման և հրապարակման հարցում
- ☐ Իրականացվել են ֆակուլտետի գործունեության, մասնագիտությունների մասին տեղեկատվություն տարածում ԶԼՄ-ների, սոցիալական ցանցերի միջոցով / Հաջողության բանաձև, Facebook/:

Ռազմավարական ուղղություն 9. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ /Տես՝ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ/

Ռազմավարական ուղղություն 10.ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

- ☐ Կրթական ծրագրերը համակարգող ամբիոններից հավաքագրվել են ՄԿԾ-ների, ՊԴԱ գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ տվյալներ, ինքնավերլուծություններ և այլ փաստաթղթեր կատարման ընթացքի շարունակական գնահատման համար

Ռազմավարական ուղղություն 11.ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

- ☐ Ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումները, ՊԴ կազմը ակտիվորել օգտագործել են դասավանդման էլեկտրոնային հարթակների հնարավորությունները
- ☐ Պարբերաբար իրականացվել են դասալսումներ առկա և առցանց տիրույթներում
- ☐ Թարմացվել և բազմազանեցվել են կրթական ծրագրերի դասընթացների էլեկտրոնային փաթեթները

## II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

| Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին: |
|---|
| Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, <<Կրթության մասին>>, <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներով, Համալսարանի կանոնադրությամբ և համապատասխան այլ իրավական ակտերով, ինչպես նաև Համալսարանի և Ֆակուլտետի կառավարման մարմինների իրավասության շրջանակներում ընդունված իրավական ակտերով: Ֆակուլտետի խորհուրդը դեկանի նախագահությամբ գործող Ֆակուլտետի կառավարման մարմին է, որի որոշումները պարտադիր են Ֆակուլտետի սովորողների և աշխատողների համար:Ֆակուլտետի խորհրդի կազմը ձևավորվել է պրոֆեսորադասախոսական կազմից ,ուսանողության կողմից առաջադրված ներկայացուցիչներ (առնվազն 25 %)., ներքին և արտաքին շահառուներից և գործատուներից:Խորհրդում քննարկվում և լուծվում են ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքների, միջազգային կապերի և այլ գործունեության հետ կապված հարցեր, գիտական խորհրդում հաստատելու համար ռեկտորին է ներկայացնում Ֆակուլտետի ուսումնական պլանները, սահմանված կարգի համաձայն՝ իրականացվում են ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունները, քննարկվում են ամբիոնների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները, Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և կրթական աշխատանքների պլանավորման և որակավորման բարձրացման հարցերը,ուսանողների մանկավարժական և ուսումնական , ինչպես նաև մասնագիտական պրակտիկաների արդյունքները: Հաստատվում է Ֆակուլտետի զարգացման ծրագրերը,ասպիրանտների անհատական պլանները, ասպիրանտների ու հայցորդների տարեկան որակավորման արդյունքները: Մշակվում և իրականացվում են միջոցառումներ Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և որակավորման, ուսանողների կրթության |

| |
|---|
| որակը բարձրացնելու և Ֆակուլտետում կրթության որակի ապահովման հարցերը: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները կառավարման գրեթե բոլոր մակարդակներում անմիջականորեն մասնակցում են որոշումների ընդունման գործընթացին, նրանց մասնակցությունը կառավարման մարմիններում կանոնակարգված է, իսկ նրանց ընտրությունն այդ մարմիններում իրականացվում է համաձայն գործող ընթացակարգի՝ ներքևից վերև: Ֆակուլտետի խորհրդի կազմը բաղկացած է 27 ներկայացուցչից:<br>Կրթության հոգեբանության ֆակուլտետի դեկանն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Համբարձումի Պետրոսյանը, դեկանի ուսումնական աշխատանքների գծով տեղակալն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիդա Ռազմիկի Արամյանը, գիտական և միջազգային համագործակցության հարցերով տեղակալն է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սոնա Արտակի Մակիչյանը: Ֆակուլտետի կազմում գործում են երեք հիմնական ամբիոններ: Հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատարն է Լևոն Կարոյի Սարգսյանը /ՀՊՄՀ-ի ռեկտորի 2021թ օգոստոսի 23-ի թիվ 1950-Ա հրամանի համաձայն/ Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պարտականությունների կատարումը վերապահված է Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, h.գ.դ., պրոֆեսոր Սրբուհի Ռաֆիկի Գևորգյանին /ՀՊՄՀ-ի ռեկտորի 08.12.2020թ. թիվ 3324-Ա հրաման/, Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի պարտականությունները կատարելում է Համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի համատեղության կարգով դասավանդող հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վահան Ժորայի Սարգսյանը /ՀՊՄՀ-ի ռեկտորի 2021թ հոկտեմբերի 10-ի թիվ 3294-Ա հրամանի համաձայն/, Ֆակուլտետը սպասարկում է նաև համահամալսարանական մանկավարժության ամբիոնը՝ սոցիալական մանկավարժություն մասնագիտությունը և բակալավրում և մագիստրատուրայում, ինչպես նաև մի շարք այլ համահամալսարանական ամբիոններ:<br>Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները մասնակցել են իրենց առնչվող որոշումների կայացմանը հիմք՝ ամբիոնի նիստերի որոշումները և ֆակուլտետի խորհրդի կազմում կատարած գործունեությունը / դասախոսներին և ուսանողներին հնարավորություն է ընձեռնվել տարբեր օղակներում անմիջականորեն մասնակցել թե՛ ֆակուլտետի, թե՛ ամբիոնների գործընթացներին և թե՛ համալսարանի վերաբերյալ որոշումների կատարումներին: ՊԻԳԲ շրջափուլի հիմնական սկզբունքներին համապատասխան ուսումնական տարվա սկզբին մշակվել, քննարկվել և հաստատվել են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանները, որոնցում ընդգրկված հարցերը բխում են 2021-2025 թվականների ռազմավարական ծրագրի 2021 թվականի գործողությունների պլանի քայլերից:Պարբերաբար քննարկվել են ներքին և արտաքին շահառուների առնչվող հարցերը,վեր են հանվել կրթության գործընթացի կազմակերպման և որակի ապահովման խնդիրները /հիմք ֆակուլտետի խորհրդի արձանագրությունները/:Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի խորհրդի 2021-22 ուս. տարվա աշխատանքային պլանում քննարկման են դրվել կիսամյակային քննաշրջանի արդյունքները, բակալավրի կրթական ծրագրի մանկավարժական, ուսումնական և մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտական պրակտիկաների կազմակերպման արդյունքները, մագիստրոսական թեզերի ,ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկումը հաստատումը,հեռակա ուսուցման համակարգի ուսումնական գործընթացների կազմակերպման հարցեր,քննարկվել են նաև ամբիոնների ասպիրանտների և հայցորդների ատեստավորման արդյունքները, ինչպես նաև Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին:<br>Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմից երկուսը՝ դեկան Ռ.Պետրոսյանը, իսկ ուսանողներից՝ սոցիալական մանկավարժություն մասնագիտության 1-ին կուրսի մագիստրոս՝ Սվետլանա Սարգսյանը: Ուսանողներից ներգրավված է նաև Սոցիոլոգիա մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրոս Սեդա Պետրոսյանը ՈՒԳԸ-ի կողմից ,իսկ դասախոսներից՝ Կ. Վարդանյանը Գիտական հետազոտական կենտրոնի կողմից: Ֆակուլտետի ուսումնական գործընթացն կառավարվում և իրականացվում է համալսարանի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից ընդունված և հաստատված ուսումնական պլանների, ծրագրերի, հաստատված գրաֆիկների, դասացուցակների հիման վրա:<br>Ֆակուլտետը վարչական կազմի և ամբիոնների մասնագետների վերապատրաստման դասընթացների մասնակցությունից հետո 2021 թ-ի նոյեմբերից գործունեություն է ծավալում Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության “Mulberry” համակարգով :<br>Համակարգվել է նաև համավարակի պայմաններում ֆակուլտետի աշխատակազմի ՊՇՈՒ թեսթավորման, պատվաստման և գրանցամատյաններում տվյալների մուտքագրման գործընթացը: |

## III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

| Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին: |
|---|
| Ֆակուլտետը հաշվետու ժամանահատվածում իրականացրել է ինչպես ուսումնական, ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերման գործընթացի արդյունավետությունն ապահովող , այնպես էլ ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ աշխատանքներ:<br>2021 թվականին Ռուզաննա Պետրոսյանի, Սոնա Մակիչյանի, Լիդա Արամյանի, Մելս Մկրտումյանի, Լիլիթ Մկրտումյանի կողմից մշակվել և ներդրվել են 2 մագիստրոսական մասնագիտական կրթական ծրագրեր՝ Կառավարման հոգեբանություն, 031301.05.15 Ճգնաժամային հոգեբանություն և միջամտություն: Ամբողջությամբ մշակվել են երկու կրթական ծրագրերի փաթեթները/, որոնք հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից: |

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ բոլոր մասնագիտություններով՝ Հոգեբանություն, Սոցիալական մանկավարժություն, Սոցիոլոգիա, Սոցիալական աշխատանք առաջին կուրս ընդունված ուսանողների ընդունելությունը կազմակերպվել է սույն թվականի սեպտեմբերի 1-ին առաջին հերթափոխով: Հանրապետությունում գործող արտակարգ իրավիճակով պայմանավորված բակալավրիատի 1-4-րդ և մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի դասացուցակները կառուցվել են հիբրիդ ձևաչափով:

Ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների պատասխանատուները ձևավորել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի 1-ին կուրսերի ուսանողների էլեկտրոնային հասցեները առցանց ուսուցման՝ classroom էլեկտրոնային համակարգին կցվելու համար:

Կազմակերպվել են տեղեկատվական հանդիպումներ ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների պատասխանատուների մասնակցությամբ կրեդիտային համակարգին ծանոթացնելու, էլեկտրոնային հասցեները տրամադրելու և classroom հարթակում առցանց ուսուցման՝ էլեկտրոնային համակարգին կցվելու համար:

Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ համագործակցելով ժամանակ առ ժամանակ առողջական խնդիրներ ունեցող դասախոսների և ուսանողների ՊՇՌ թեստերի դրական արդյունքների հիման վրա դասապրոցեսը երկշաբաթյա ժամկետներով կազմակերպվել է առցանց (սոցիալական մանկավարժություն 1-ին կուրս մանկավարժություն առարկան սեպտեմբերի 6-20-ը, սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ կուրս նոյեմբերի 19-ից դեկտեմբերի 3-ը, բակալավրիատի 1-3-րդ կուրսեր՝դեկտեմբերի 9-22-ը):

Առանձին նոյեմբերի առաջին շաբաթում կազմակերպվել են ֆակուլտետի ամբիոնների նիստեր որտեղ քննարկվել են 1-ին կուրսերի մագիստրոսների և 4-րդ կուրսերի ավարտական թեզերի խորագրերը:

Հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրսի ուսանողների համար ստեղծվել են էլեկտրոնային հասցեներ, 2-րդից 5-րդ կուրսերի խորհրդատվական դասընթացների էլեկտրոնային գրաֆիկներ առկա հղումներով: 2021-2022թ-ի հեռակա ուսուցման բակալավրիատի էլեկտրոնային դասընթացների կազմակերպման համար ֆակուլտետի ամբիոնների առցանց պատասխանատուները Classroom հարթակում ստուգել և տեղայնացրել են 1-ից 5-րդ կուրսերի դասընթացները, նկարագրերն ու հարցաշարերը, ինչպես նաև ուսումնական նյութերը առանձին թեմաներով:Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի առկա ուսուցման 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի 3-րդ, 4-րդ ,հեռակա 5-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների ուսումնաճանաչողական, մանկավարժական, մասնագիտական պրակտիկաները կազմակերպվել են հետևյալ դպրոցներում և կենտրոններում հիբրիդային եղանակով՝ պայմանավորված հանրակրթական դպրոցների արձակուրդներով և համաճարակով .

«Արթմեդ» բժշկական կենտրոնի «Սթրես» վերականգնողական կենտրոնում, «Ապագա» հոգեբանական կենտրոնում, աշխատանք զինվորների հետ, «Ավրորա Քիդս» ՍՊԸ-ում, մանկական զարգացման կենտրոնում, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամում, «Ապագա» հոգեբանական կենտրոնում, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում, «Արթմեդ» բժշկական կենտրոնի «Սթրես» վերականգնողական կենտրոում, «ԼԱՎՄԵԴ »կլինիկաում , «Պսիլայֆ, Երևանի «Բանալի» ընտանիքի կենտրոնում, հանրապետական թիվ 1 կրթահամալիրում, «Երևանի թիվ 1 սարածքային մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ում,ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության քրեակատարողական հիմնարկներ՝ Աբովյան և Վանաձոր, «ԱՐԻՆՍԱՅԹՍ» հետազոտական և խորհրդատվական ընկերությունում, Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամում,Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ում, «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կետրոն բարեգործական հասարակական կազմակերպությունում, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում: Ինչպես նաև Երևանի 10, 20, 119, 46 , 78, 104, 131, 100, 196 հանրակրթական դպրոցներում:

**Իրականացվել են հիմնական նախապատրաստական աշխատանքները**

- Դպրոցների հետ նախնական պայմանավորվածության ձեռքբերում:
- Հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ:
- Աշխատանքների պլանավորման և իրականացման ցուցումներ դպրոցների մասնագետներին:
- Պրակտիկայի մեկնարկային կոնֆերանսի անցկացում:
- Առցանց ուսուցման պայմանների ստեղծում:

| |
|---|
| - Մեթոդիստներին, հոգեբաններին և մանկավարժներին տրվել են խմբերի աշխատանքային պլանների կազմման ցուցումներ` ըստ ուսումնաճանաչողական պրակտիկայի նկարագրի:<br>- ուսումնական պրակտիկայի շրջանակներում իրականացվել է Հայաստանում ընտանիքների կարիքի գնահատում և աջակցության տրամադրում:<br>- կազմակերպված ուսումնական պրակտիկաների շրջանակներում յուրաքանչյուր ուսանող առաջին անգամ մասնակցել է սոցիալական դեպքի վարման շրջանակներում իրականացվող աշխատանքներին, /հարցազրույցի պլանի կազմում, տունայց, կարիքի գնահատում, սոցիալական պատմության և միջամտության պլանի կազմում, վերլուծություն, եզրակացություններ և առաջարկներ/:<br>Պրակտիկայի շրջանակներում ուսանողների համար կազմակերպվել են օնլայն հանդիպումներ սոցիալական աշխատանքի պրակտիկ դաշտի վերոհիշյալ կառույցների հմուտ մասնագետների հետ: Ծավալվել են նաև հետազոտական աշխատանքներ են համագործակից կառույցներում և կենտրոններում: Երկրում տիրող արտակարգ դրությամբ պայմանավորված հետազոտություններն իրականացվել են նաև առցանց տարբերակով` կիրառելով google հարթակի հնարավորությունները: |
| Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: |
| Ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները համարժեք են առարկայական նկարագրերում ներկայացված վերջնարդյունքներին, քննարկվում են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիտսերում: |
| Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ: |
| Ֆակուլտետի միջազգայնացման ծրագրերի շրջանակներում համապատասխան աշխատանքներ են իրականացվել նաև ուսանողների` փոխանակման ծրագրերի մեջ ընդգրկվածությունն ընդլայնելու ուղղությամբ: Մասնավորապես Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում համալսարանի միջազգային համագործակցության բաժնի հետ սերտ համագործակցության արդյունքում իրականացվել է «Հոգեբանություն» մասնագիտական կրթական ծրագրի առկա և հեռակա համակարգերի ուսումնական պլանների համադրում Իսպանիայի Վալենսիայի համալսարանի համապատասխան կրթական ծրագրերի հետ, որի արդյունքում Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի «Հոգեբանություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման 4-րդ կուրսի ուսանող Ռազմիկ Կոշեցյանը և «Հոգեբանություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանող Աստղիկ Գանջալյանը 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակը սովորելում են Վալենսիայի համալսարանում:<br>Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև «Հոգեբանություն» մասնագիտական կրթական ծրագրի առկա և հեռակա համակարգերի ուսումնական պլանների համադրում Ռումինիայի Տրանսիլվանիայի Բրաշովի համալսարանի համանման կրթական ծագրի հետ: |

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

| | | | |
|---|---|---|---|
| Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները: | | | |
| Ֆակուլտետում ուսանողների թիվը`ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի: | | | |
| Բակալավրի | | առկա | 572 |
| | | հեռակա | 460 |
| Մագիստրոսի | | առկա | 117 |
| | | հեռակա | - |
| Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով | | | |
| Ուսանողների արտահոսք | | | |
| Հաստատություն/երկիր | | | թիվ |
| 1 | Իսպանիայի Վալենսիայի համալսարան | | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | | | |
| 3 | | | |
| 4 | | | |
| 5 | | | |
| Ուսանողների ներհոսք | | | |
| Հաստատություն/երկիր | | թիվ | |
| 1 | Երևանի <<Գրիգորիս>>բժշկա-հումանիտար քոլեջ | 1 | |
| 2 | Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ | 2 | |
| 3 | Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ | 2 | |
| 4 | ՀՀ ԱՆ Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ ՊՈԱԿ | 1 | |
| 5 | Վարդենիսի <<Բաղեյան>> պետական քոլեջ | 2 | |
| 6 | Երևանի պետական հումանիտար քոլեջ | 1 | |
| 7 | ՀՀԿԳՄՍՆ <<Սևանի բազմագործառութային պետական քոլեջ>> | 2 | |
| 8 | Երևանի Հենակետային Բժշկական Քոլեջ | 2 | |
| 9 | ՀՀԿԳՄՍՆ Երևանի հայ-ամերիկյան <<Էրեբունի>> պետական բժշկական քոլեջ | 1 | |
| 10 | ԿԳՄՍ Նախարարության Ալավերդու պետական քոլեջ | 1 | |
| 11 | Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ | 1 | |
| Հեռացումներ և վերականգնումներ | | տոկոս | թիվ |
| 1 | Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը | 4,7 | 55 |
| 2 | Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը | 2,08 | 24 |

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:
Ֆակուլտետի ուսանողների հավաքագրման աշխատանքների արդյունքների վերլուծությունը փաստում է դրանց արդյունավետությունը, քանի որ իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի ընդունելության թվաքազմը բավականին նշանակալի է վերջին տարիներին, նույնիսկ ընդունեկությունն իրականացվում է մրցութային պայմաններում:
Խնդիր կա մագիստրոսական կրթական ծրագրերով ուսանողների հավաքագրման նոր մեխանիզմների մշակման և կիրառման առումով, անհրաժեշտ է բարձրացնել դրանց արդյունավետությունը: Ֆակուլտետում արդեն իսկ մշակվում են նոր մեխանիզմներ

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները: (տեքստը այստեղ)

Ուսանողների հեռացման պատճառ է հանդիսացել ուսման վարձի պարտքերը և ակադեմիական պարտքերը:Ակադեմիական պարտքերի դեպքում հեռացվել են այն ուսանողները,ովքեր ունեցել են 12 կրեդիտից ավելի պարտքեր,իսկ ուսման վարձի պատճառով հեռացվել են այն ուսանողները, ովքեր չեն կատարել իրեն վարձի պարտքի մարումը նշված վերջնաժամկետներում: Վերականգնվող ուսանողներ եղել են տարկետումից, դիմումներ ներկայացրել են նաև հեռացված ուսանողները:

| | |
|---|---|
| Հաշետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում: | |
| Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը: | |
| Բակալավր | 10 |
| Մագիստրոս | 5 |
| Ընդհանուր | 15 |
| Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը | |

| | Գիտահետազոտական ծրագիր | ուսանողների թիվ |
|---|---|---|
| 1 | | |
| 2 | | |

| | | |
|---|---|---|
| 3 | | |
| 4 | | |
| Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը | | |
| | Տպագրված աշխատանք | ուսանողների թիվ |
| 1 | Psychological-Pedagogical features of the pedagogues" emotional exhaustion | 1 |
| 2 | Բնագիտամաթեմատիկական և հումանիտար մասնագիտական ուղղվածությամբ ուսանողների արժեհամակարգի առանձնահատկությունները | 1 |
| 3 | Նախադպրոցական տարիքի երեխաների դպրոցամուտի ճգնաժամը և հաղթահարման հոգեբանամանկավարժական ուղիները | 1 |
| 4 | Դեռահասության տագնապայնության և հուզական անկայունության հաղթահարման ուղիները ռազմական դրության պայմաններում | 1 |
| 5 | 1-2-րդ կուրսի ուսանողների ուսումնական գործունեության շարժառիթները: | 1 |
| 6 | Երիտասարդների արժեքային կողմնորոշումների առանձնահատկություններն ու դրանց սեռային տարբերությունները | 1 |

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| |
|---|
| Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին: |
| ՊԴԱ կազմի ձևավորման քաղաքականությունը և ընթացակարգերը ամրագրված են ՀՊՄՀ-ի կանոնադրությունում, ներքին կարգապահական կանոններում և պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում: Դասախոսական կազմի ընտրության համար ուղենիշ են ծառայում ՀՊՄՀ ռազմավարությունը, ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանը, ՄԿԾ-ի նպատակները: Ֆակուլտետը և ամբիոնները յուրաքանչյուր մասնագետի ներգրավման համար քննարկման են ենթարկում թեկնածուների բազային կրթությունը, աշխատանքային փորձը (ոլորտի)՝ իրականացնելով որակական գնահատում, հաշվի առնելով նաև ՄԿԾ-ի կարիքներն ու նպատակները, հավակնորդի կարողությունների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին:<br>Ֆակուլտետի կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոնների ՊԴԱ գերակշիռ մասն ունի գիտական աստիճան: Ֆակուլտետի տարբեր մասնագիտություններում դասավանդում են գիտությունների 11 դոկտորներ և 65 թեկնածուներ, ինչպես նաև ոլորտի առաջատար մի շարք մասնագետներ: Ֆակուլտետի մասնագետներն իրականացնում են ՀՀ կրթական, քննչական, ռազմական, սոցիոլոգիական, հասարակական ոլորտների փորձագիտական, հանրակրթական հաստատությունների ուսուցիչների և նուռ-երի աշխատակիցների վերապատրաստման աշխատանքներ:<br>Ֆակուլտետի ՊԴԱ կազմում ներգրավված են նաև գործատուներ, ոլորտի լավագույն պրակտիկ մասնագետներ, ինչը միտված է ֆակուլտետ-գործատու համագործակցության ընդլայնմանը, ուսանողների ուսումնական գործընթացի, մասնավորապես պրակտիկաների կազմակերպման, տեսականի և գործնականի համադրման, ուսանողների հետագա աշխատանքային գործունեության և մասնագիտական կայացման գործընթացների արդյունավետության ապահովմանը:<br>Ֆակուլտետի ՊԴԱ հիմնական կազմն ամբողջովին ներգարվված է ամբիոնների գերակա գիտական ուղղությունների շրջանակներում իրականացվող հետազոտություններում: Հոգեբանության և Կիրառական հոգեբանության ամբիոնների պրոֆ |

| |
|---|
| եսորադասախոսական կազմից 2-ը ներգրավված են Գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային ծրագրերում: |

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

| Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն: |
|---|
| Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:<br>Հոգեբանության ամբիոնների մասնագիտական գործունեության շրջանակներում մեծ է գիտական, հետազոտական աշխատանքների, արդեն ավանդաբար շարունակվող հետազոտական ծրագրերի իրականացման դերը: Այստեղ պետք է նշենք այն հետազոտական ծրագրերը, որոնցից որոշները դեռևս շարունակվում են: Դրանք են՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագիրը: Գիտական թեմա՝<br>☐ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորված Գիտահետազոտական աշխատանքերի կատարում, արդյունքների մշակում, գրքի հրատարակում. «Անձնավորության հոգեբանական պրոբլեմները», ղեկավար՝ Ս. Խուդոյան, Ս. Սուքիասյան, Ն. Հարությունյան<br>☐ «Արտակարգ իրավիճակներում սովորողների հոգեբանական անվտանգության ապահովման համակարգը», 2017-19թթ. հ.գ.դ., ղեկավար՝ պրոֆեսոր Մ. Մկրտումյան,<br>☐ «Սովորողների հոգեբանական անվտանգության ապահովման հմտությունների ձևավորում», 2019-21թթ., հ.գ.դ., ղեկավար՝ պրոֆեսոր Մ. Մկրտումյան,<br>☐ «Փոխակերպվող հասարակությունում սովորողների հոգեբանական անվտանգության ապահովման հիմնախնդիրների հետազոտումը» ղեկավար՝ հ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մկրտումյան,<br>☐ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտ. Կոգնիտիվ հոգեբանական ուսումնասիրություններ՝ շախմատի կրթական արժեքը բացահայտելու նպատակով Ա. Սարգսյան, Ա. Խաչատրյան:<br>☐ Գիտահետազոտական կենտրոնի աշխատանքներ 2016թ. հ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ռ. Գևորգյան, հ.գ.թ., դոցենտ Կ. Վարդանյան: |
| Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ: |
| ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ |

| | Ամսագիրը (երկիրը) | Վարկանիշը | Հրապարակում ների թիվ |
|---|---|---|---|
| 1 | Всероссийская конференция «История отечественной и мировой психологической мысли: знать прошлое, анализировать настоящее, прогнозировать будущее» | | 1+1 |
| 2 | ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ: ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ» II Международная научно-практическая конференция<br>Сборник трудов конференции, | | 1 |
| 3 | журнал «Заметки Ученого». | | 1 |
| 4 | V Международная научно-методическая конференция «Актуальные проблемы довузовской подготовки» Беларусь | | 1 |
| 5 | Методология современной психологии. Вып. 13 /Сб. под ред. Козлова В.В., Карпова А.В., Мазилова В.А., Петренко В.Ф. ЯрГУ, ЛКИИСИ РАН, МАПН | | 1 |
| 6 | ФИНАНСОВЫЕ ИССЛЕДОВАНИЯ<br>FINANCIAL RESEARCH (70), Журнал включен Высшей аттестационной комиссией (ВАК) РФ | | 1 |
| 7 | Всероссийский (с международным участием) научно-практический семинар: | | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | ФОРМИРОВАНИЕ РАЗВИТОГО ПРАВОСОЗНАНИЯ, ПРАВОВОГО МЫШЛЕНИЯ, ПРАВОВОЙ КУЛЬТУРЫ, Ростов-на-Дону | | |
| 8 | ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ И СО ВРЕМЕННОСТЬ | | 1 |
| Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը | | | |
| | Ամսագիրը (երկիրը) | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
| 1 | International Electronic Scientific and Practical Journal “WayScience” (ISSN 2664-4819 (Online)) | | 1 |
| 2 | Revista Mundi Engenharia, Tecnologia e Gestão. Paranaguá, PR | | 1 |
| 3 | Materials of the X international scientific conference, THE CHILDHOOD, ADOLESCENCE AND YOUTH IN A CONTEXT OF SCIENTIFIC KNOWLEDGE | | 1 |
| 4 | Materials of the XII international scientific conference<br>on May 15–16, 2021<br>PSYCHO-PEDAGOGICAL PROBLEMS<br>OF A PERSONALITY<br>AND SOCIAL INTERACTION | | 1 |
| 5 | Chronicles of Pharmaceutical Science. ISSN: 2572-7761 | | 1 |
| 6 | Advanced Materials, Polymers, and Composites, published by Apple Academic Press , USA , chapter 10 | | 1 |
| 7 | Neuroscience and Behavioral Physiology | | 12 |
| 8 | Sciences of Europe | | 5 |
| 9 | Asian Journal of Psychiatry | | 1 |
| ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը | | | |
| | Ամսագիրը | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
| 1 | Main Issues of Pedagogy and Psychology | DOAJ, Crossref, WorldCat, Google scholar, ERIHPLUS | 3 |
| 2 | ԲԱՆԲԵՐ<br>Երևանի համալսարան | ՀՀ ԲՈԿ | 2 |
| 3 | ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ (18 հունիսի, 2021) ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ | | 2 |
| 4 | Կաճառ | | 4 |
| 5 | «ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»<br>ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ | | 1 |
| 6 | Գիտ. հոդվածների ժղվ./ ԵՊՀ | | 1 |
| 7 | ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր | | 3 |
| 8 | ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՃԳՆԱԺԱՄԱIՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ | | 1 |
| 9 | WISDOM | | 2 |
| 10 | Գավառի Պետական Համալսարան<br>Գիտական հոդվածների ժողովածու | ISSN 1829 -4480 | 1 |
| 11 | Գիտական հոդվածների ժողովածու «Եվրոպրինտ» հրատ<br>www.ipsol.sci.am | | 1 |
| 12 | Evolution in Polymer Technology Journal | | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 13 | «Հայաստանը 1945-1965 թթ.» գիտաժողովի զեկուցումների ժողովածու | | 1 |
| 14 | Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ | | 1 |
| 15 | Вестник РАУ | | 1 |
| 16 | Հանրային կառավարում գիտական հանդես, ՀՀ ՊԿԱ | | 1 |
| 17 | Научно-методический журнал «Проблемы современной русистики» Филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова | | 1 |
| 18 | VIII International Scientific Conference "The Current Issues In Theoretical And Applied Psychology" –ի հոդվածների ժողովածու | | 2 |

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:

Ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմը 2021 թվականին մասնակցել է միջազգային /ինչպես նաև միջազգային կառույցների ներգրավմամբ/ գիտաժողովների, կլոր սեղանների, վերապատրաստումների և այլ միջոցառումների:

Գիտաժողովներ

1. Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրները, Միջազգային գիտաժողով
2. «Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ինտեգրման հիմնախնդիրները և մարտահրավերները» խորագրով միջազգային գիտաժողով, /առցանց/
3. Международная научно-практическая конференции молодых ученых и студентов «Приоритетные направления развития спорта, туризма, образования и науки», Нижний Новгород /առցանց/
4. "Международная научно-практическая конференция «ЕВРАЗИЙСКАЯ ИНТЕГРАЦИЯ: УКРЕПЛЕНИЕ ПОЗИЦИЙ, РАЗВИТИЕ СВЯЗЕЙ И ВЗАИМООТНОШЕНИЙ» "
5. Общечеловеческие и национальные ценностные ориентации личности в период экстремальных ситуаций // Проблематизация человека: незавершенный проект, Институт Философии АН РФ, առցանց
6. X международная научная конференция проекта «Социально-политическое измерение процессов евразийской интеграции» ЕВРАЗИЙСКАЯ ИНТЕГРАЦИЯ: УКРЕПЛЕНИЕ ПОЗИЦИЙ, РАЗВИТИЕ СВЯЗЕЙ И ВЗАИМООТНОШЕНИЙ, Москва онлайн
7. International on line conference “Chess in education”

Կլոր սեղաններ, սեմինարներ

1. Հոգեբանական աշխատաժողով, Արցախ
2. Emotional intelligence, generational healing, suicide prevention, post war recovery s soul-surfing using the 7-step integrative healing model. 4 hour workshop
3. «Հայ սփյուռքի ուսումնասիրությունների տարածաշրջանային կենտրոնի աշխատանքների նպատակները, ուղիները» միջազգային հեռահար սեմինար, 28 ապրիլի 2021, ՀԱԻ, Երևան
4. «Համահայկական սփյուռքագետների համագործակցության խնդիրները», Հեռահար միջազգային սեմինար, 06.05.2021, Երևան
5. «Չինական սփյուռքի առանձնահատկությունները», Հեռահար միջազգային սեմինար, Երևան, 16.04.2021

Վերապատրաստումներ

1. «Կիրառական և կլինիկական հոգեբանության հիմնախնդիրները» ՀՊՄՀ
2. Անգլերեն լեզվի վերապատրաստման դասընթացներ
3. – Мастер-класс по работе с травмой (20 часов). Ведущая: клинический психолог, семейный системный терапевт С.А.Сагателян, Российско-Армянский Университет
4. “Student – centered teaching and learning workshop” /առցանց/
5. Transpersonal psychology and hypnotherapy school. 52 academic hours. Yerevan
6. Ընտանեկան և գենդերով պայմանավորված բռնության սոցիալ-հոգեբանական ասպեկտները, առցանց եղանակով Zoom հարթակում, կազմակերպիչներ՝ Դոնբասի համալսարանի Կիրառական հոգեբանության ամբիոն, Громадська організація ‘Точка рівноваги”
7. The Resilience Summit: Coping With Challenging Times

Ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները ընդլայնման կարիք ունեն: Վերջին տարիներին օբյեկտիվ գործոնների ազդեցության ներքո՝ համավարակ,

պատերազմ, այդ աշխատանքների տեմպը թուլացել է: Սակայն նախատեսվում են կոնկրետ քայլեր հաջորդ տարիներին աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Վերլուծության են ենթարկվել ֆակուլտետի, ամբիոնների գիտահետազոտական, միջազգայնացման աշխատանքները, կազմվել է այդ ուղղությունների զարգացման տեսլականը:

Ֆակուլտետը համագործակցում է նաև հանրապետության մի շարք ուսումնական, գիտակրթական, հետազոտական կենտրոնների, լաբորատորիաների, ինստիտուտների հետ, այդ թվում ՀՀ Արդարադատության, Զինված ուժերի, Արտակարգ իրավիճակների, Առողջապահության նախարարությունների հետ: Համագործակցության հիմնական շեշտը դրվում է գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման վրա:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):

Ժամանակակից կրթական հաստատություններում դասախոսների մասնագիտական պատրաստվածության կատարելագործման կարևորագույն գործոնը դա կրթությունն է գիտության միջոցով, այսինքն ուսումնառության և գիտահետազոտական գործունեության միասնությունը՝ երբ ուսումնական գործընթացը հիմնվում է դասախոսների ու ուսանողների համատեղ գիտական հետազոտությունների վրա: Սակայն, հայտնի է, որ բավական դժվարին ու տևական խնդիր է հանդիսանում գիտական ու կրթական միջավայրերի համատեղումը մեկ միասնական հաստատության շրջանակներում, քանի որ, ըստ ձևավորված կարծրատիպի, դրանցից առաջինը ենթադրում է նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գործողությունների ու միջոցառումների համալիր, իսկ երկրորդը՝ պատրաստի գիտելիքների մատուցման գործընթաց: Հիմնախնդրի լուծման լավագույն եղանակը կրթական հաստատության կառույցի ներսում արդյունավետ գիտական ստորաբաժանումների ստեղծման մեջ է, որոնք ունակ կլինեն ձևավորելու շոշափելի գիտական արդյունքներ ապահովող բարձր մակարդակի գիտական միջավայր, ինչը և ներառված է ռազմավարական ծրագրում և գոևծողությունների կատարման պլանում: Նշված ռազմավարական նպատակի ձեռքբերման ընթացքում նախագծված կարճաժամկետ ու միջնաժամկետ ծրագրերի շարքում իրականացվել եմ հետևյալ աշխատանքները

- գործընկերային հարաբերություններ են հաստատվել խոշոր գիտահետազոտական կենտրոնների հետ, պայմանավորվել համատեղ հետազոտությունների իրականացման մասին,
- գիտահետազոտական գերակա ուղղությունների զարգացման աշխատանքներում ներգրավվել են ուսանողները,
- տպագրվել են համատեղ հոդվածներ
- նախատեսվել է ուսանողների ներգրավմամբ գիտական կոնֆերանսներ, սեմինարների կազմակերպում,
- խրախուսվել է հանրապետական ու միջազգային գիտական մրցույթներին մասնակցությունը և այլն:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:

Ֆակուլտետում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերը իրականացվում են հնարավորինս տեխնիկապես ապահովված լսարաններում: Ֆակուլտետը ունի 1 լաբորատորիա, որը միտված է ավելի արդյունավետ դարձնելու ուսնաողներին գիտելիքների փոխանցման գործընթացը: Ֆակուլտետը տեղակայված է բուհի հինգ ուսումնական շենքերից Խանջյան 5 հասցեի բարձրահարկ մասնաշենքի 7-րդ հարկում:Կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր է ծառայում 2-րդ հարկից 5 լսարան, 3-րդ հարկից 3 լսարան, 4-րդ հարկից 2 լսարան, 5-րդ հարկից 2 լսարան, 6-րդ հարկից 2 լսարան, 7-րդ հարկի 9 լսարան, 8-րդ հարկից 3 լսարան, 9-րդ հարկից 8 լսարանային ֆոնդերը որոշակի ժամերի/ 1-ին և 2-րդ հերթափոխեր/: Գործնական պարապմունքներ են կազմակերպվում նաև շահառու հաստատություններում:
Սակայն նշված լսարանային ֆոնդը հաշվետու ժամանակահատվածում օգտագործվել է մասնակի՝ կապված ՀՀ արտակարգ իրավիճակով:

## VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:**

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմը ակտիվորեն մասնակցել են նաև հոգեբանության կիրառական ոլորտի գործունեությանը: Մասնավորապես՝ հոգեբանական խորհրդատվության, հոգեբանական ախտորոշման, դատահոգեբանական փորձաքննություն աշխատանքներում: Հոգեբանության ամբիոնների մասնագետներ հ.գ.թ., դոցենտ Ա. Արզումանյանը, Ա. Բեջանյանը, Ն. Ստեփանյանը, Ա. Առաքելյանը, Մ. Հ, հ.գ.թ., դոցենտներ Լ. Սարգսյանը, Մ. Միքայելյանը, Լ. Լաչինյանը, Ա. Կարունյանը, Լ. Մկրտումյանը, Ա. Ղազարյանը, Լ. Վարդանյանը, Ա. Խուդոյանը, Ա. Ափզյանը, հ.գ.դ. պրոֆեսոր Մ. Մկրտումյանը, դասախոսներ Գ. Հարությունյանը, Ն. Հարությունյանը իրականացնում են հոգեբանական խորհրդատվություն, հոգեթերապիա: 2020թ Ղարաբաղյան պատերազմի և հետագա հակամարտության ժամանակահատվածում ամբիոնների պրոֆեսորադասախոսկան անձնակազմը Պաշտպանության նախարարության հետ համատեղ ակտիվորեն ներգրավված են եղել արցախյան պատերազմի օրերին և դրանից հետո հոգեբանական աջակցության գործընթացներին: Աջակցություն են ցուցաբերել նաև պատերազմի մասնակիցներին, նրանց հարազատներին, վիրավորներին, զոհվածների ընտանիքների անդամներին, տեղահանվածներին և պատերազմից տուժած այլ անձանց: Սրան զուգահեռ ամբիոնի մասնագետներ Լևոն Սարգսյանը, Աննա Առաքելյանը, Սիրինե Առաքելյանը Արցախի Հանրապետության Առողջապահության նախարարության պատերազմից տուժած անձանց աջակցության ծրագրով մինչ օրս աշխատում են Արցախի Հանրապետության տարբեր շրջաններում: Շարունակում են աջակցության ծրագրերը նաև աշխատակիցներ Ա. Արզումանյանը, Ա. Գյուրջյանը, Ա Բեջանյանը, Մ. Մկրտումյանը, Վարդանյան Ա.:

Ամբիոնի անդամները արժանացել են պատվոգրերի ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից, ինչպես նաև շնորհակալագրի՝ Արցախի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության կողմից՝ Արցախի աջակցող մասնագետների վերապատրաստման աշխատանքների համար:

Ամբիոնի անդամները մասնակցել և մասնակցում են բազմաթիվ հեռուստահաղորումների, ամլո ասուլիսների, զբաղվում հասարակական լուսավանման աշխատանքներով հատկապես հասարակության համար արդիական, հասարակությանը հետաքրքրող հարցերի շուրջ:

ՀՀ տարբեր դատարաններում քննվող քրեական և քաղաքացիական գործերով ՀՊՄՀ Հոգեբանության ամբիոնի մասնագետներ Ս. Առաքելյանը, Ա. Առաքելյանը, Մ. Ավետիսյանը, Գ. Եսայանը, Ա. Բեջանյանը, Կ. Վարդանյանը, Ա. Արզումանյանը, Հոգեբանության ամբիոնի մասնագետներ՝ գիտությունների հեկնածուներ, դոցենտներ Լ. Սարգսյանը, Ռ. Պետրոսյանը, Մ. Միքայելյանը, Լ. Վարդանյանը, Ա. Ղազարյանը, Ա. Խուդոյանը, Ան. Խաչատրյանը, Ա. Կարունյանը, դասախոսներ՝ Ն. Հարությունյանը, Ռ. Ժամկոցյանը, Հ. Գևորգյանը փորձաքննություններ են անցկացնում :

Հոգեբանության ամբիոնի հոգեբանական գիտությունների թեկնածու դոցենտներ Լիդա Արամյանը և Սոնա Մակիչյանը 2021թվականի սեպտեմբերի 13-ից մինչև նոյեմբերի 10-ը ներգրավված են եղել ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ատեստավորման ենթակա վերապատրաստվող ուսուցիչների վերապատրաստման "Հոգեբանություն" բաժնի վերապատրաստման գործընթացին:

Հաշվետու ժամանակահատվածում ինտենսիվ աշխատանքներ են կատարվել նաև հանրակրթական դպրոցների հետ դիմորդների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման գործընթացում, մասնավորապես՝

1.Լուսինե Տանաջյան Արարտի մարզ, գյուղ Այնթապ, Թիվ 1,2 միջնակարգ դպրոց Արարատի մարզ, գյուղ Այնթապ,

2.Ասատրյան Գայանե ք. Երևան Ավագ դպրոց թիվ 118,195 Արզումանյան փող., 8 շենք հոկտեմբեր

3.Պետրոսյան Անուշ ք. Երևան Արգիշթի առաջին արքայի անվան № 61 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ և Երևանի թիվ 198 ավագ դպրոց ՊՈԱԿ, այցելություններ Արարատի և Մասիս մարզեր:

4. Մելքոնյան Նելլի Արմավիրի մարզ <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ գ. Մերձավան, Արմավիրի քաղաք Մ.Սիլիկյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց,ք. Երևան Երևանի Մուրացանի անվան թիվ 18 հիմնական դպրոց, Հովի, Թումանյանի անվան թիվ 32 հիմնական դպրոց:

5.Մկոյան Գոհար Ք.Սպիտակ Սպիտակի ավագ դպրոց 16. Մկոյան Գոհար Ք.Սպիտակ Սպիտակի Ծաղլ Ազնավուրի անվան թիվ 3 հիմնական դպրոց Ք.Սպիտակ Խնկոյան 5 Հոկտեմբեր-նոյեմբեր ,Կոտայքի մարզ Գյուղ Ջրվեժի Վազգեն Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց, ՆՔ.Երևան Ք.Երևան, 185 ավագ դպրոց:

6.Քելոյան Մ., Գևորգյան Ա. Արագածոտնի մարզ, Օհանավանի ավագ դպրոց:

7.Արամյան Լիդա., Մակիչյան Սոնա Ք. Երևան Թիվ 122 հիմնական դպրոց, Արմավիրի մարզի Փարաքարի միջնակարգ դպրոց:

8. Գրիգորյան Գայանե. Արագածոտնի մարզ, Աշտարակի տարածաշրջան Ղազար Փարպեցու անվան միջնակարգ դպրոց, գ. Բազմաղբյուրի Ն.Սաֆարյանի անվան միջ.դպրոց 6. Գրիգորյան Գ.

| |
|---|
| 9.Ժամկոցյան Ռուզաննա. Ք. Երևան N46 ավագ Դպրոց 8.:<br>10. Լաչինյան ԼիլիթՔ. Երևան Ա. Նավասարդյանի անվան թիվ 196 հիմնական դպրոց, Դ. Հովսեփյանի անվան թիվ 191 199 հիմնական դպրոցներ:<br>11.Խաչատրյան Արմինե Կոտայքի մարզ Լեռնանիստի Ստեփանոս Նազարյանի անվան միջնակարգ դպրոց:<br>12.Խուդոյան Անի. Ք. Երևան 153, 135 հիմնական դպրոցներ:<br>13.Կաթունյան Արաքսյա. Ք. Երևան Չարենցի անվան և Ձ. Կիրակոսյանի անվան թիվ0 70 հիմնական դպրոցներ:<br>14. Ղազարյնա Արմինե. Ք. Երևան թիվ 149, 104 հիմնական դպրոցներ և Գեղարքունիկի մարզի թիվ 3-րդ հիմնական դպրոց<br>15 Միքայելյան Մ. Ք. Երևան 170 ավագ դպրոց Ավան,<br>16. Վարդանյան Լ. Ք. Երևան Հյրապետ Հայրապետյանի անվան հ.194, 78, 2-րդ հիմնական դպրոցներ<br>17.Քոսակյան Վ. Ք. Երևան Թաթուլ Կրպեյանի անվ. 159, 62 189 ավագ դպրոցներ Նոր-Նորք վարչական շրջան, Նանսենի 6 15. 11. 2021- 20. 11. 2021<br>18 Ստեփանյան Նարինե Ք.Երևան հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր:<br>19. Սարգսյան Վահան Ք. Երևան 142, Փարաքարի միջնակարգ դպրոց: |

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

| |
|---|
| Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում: |
| Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը: |
| 2021 թվականի ապրիլի 5-ից մինչև 17-ը համալսարանի Գիտահետազոտական կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է ֆակուլտետի հոգեբանության և կիրառական հոգեբանության ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի՝ «Կիրառական և կլինիկական հոգեբանության հիմնախնդիրները» խորագրով 36-ժամյա մասնագիտական միջազգային վերապատրաստման դասընթաց: Դասընթացում որպես միջազգային փորձագետ և վերապատրաստող ընդգրկվել էր նաև հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի ընտանեկան և երիտասարդական քաղաքականության պետական ինստիտուտի բաժնի վարիչ, Կիևի վերականգնողական կենտրոնի հոգեբանական ծրագրերի ղեկավար, հատուկ վիճակների ակտիվ թերապիայի, գանգուղեղային վնասվածքների, խրոնիկ հոգեկան հիվանդությունների, հաշմանդամների կլինիկական հոգեբան Սերգեյ Իվանի Բուլտիվեցը: Վերապատրաստման դասընթացին մասնակցել և հավաստագիր են ստացել հոգեբանության և կիրառական հոգեբանության ամբիոնի 37 դասախոսներ:<br>Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունը միջազգային գործընթացներում խթանելու նպատակով /դասախոսություններ, համաժողովներ, սեմինարներ, միջմշակութային շփումներ/ խրախուսվել է նրանց մասնակցությունը համալսարանի Գիտահետազոտական կենտրոնի կողմից կազմակերպված A2 տիրույթում անգլերեն լեզվի վերապատրաստման դասընթացներին: Վերապատրաստման դասընթացներին մասնակցության հայտ են ներկայացրել 16 դասախոսներ, ինչպես նաև դեկանատի և ամբիոնների մասնագետները: Համալսարանի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից իրականացվել է գիտելիքների նախնական գնահատում /թեսթավորում/: Դասընթացը մեկնարկել է 2021 թվականի նոյեմբերի 18-ին: 1-ին փուլում ընդգրկվել են այն դասախոսները, որոնց թեսթավորման արդյունքները բարձր են /100 միավոր/: Ֆակուլտետից այս փուլին ընդգրկվել են հոգեբանության ամբիոնի դոցենտներ Սոնա Մակիչյանը, Լիլիթ Լաչինյանը, դասախոսներ Արմինե Ղազարյանը, Ռուզաննա Ժամկոցյանը:<br>Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ- ի և Բորիս Ելցինի անվան Ուրալի դաշնային համալսարանի հետ կնքված համաձայնագրի շրջանակներում 2021 թվականի հոկտեմբերի 1-ին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանը, փոխդեկաններ Լ.Արամյանը և Ս.Մակիչյանը հանդիպում են ունեցել Ուրալի դաշնային համալսարանի Նոր և նորագույն պատմության ամբիոնի դասախոս, դոցենտ Յուլիա Զապարիյի հետ, որի ընթացքում երկուստեք ներկայացվել և քննարկվել են համագործակցության հնարավորությունները, ուղիները: Ներկայացված տեղեկատվության շժրջանակներում Համագործակցության կոնկրետ ուղիները քննարկվում են մասնագիտական ամբիոններում; |

Ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցել է միջազգային /ինչպես նաև միջազգային կառույցների ներգրավմամբ/ գիտաժողովների, կլոր սեղանների, վերապատրաստումների և այլ միջոցառումների /Տես՝ սույն հաշվետվության VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ/: Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողների շրջանում իրականացվել են տեղեկատվական աշխատանքներ՝ խրախուսելու միջազգային կառույցների կողմից կազմակերպվող միջոցառումներին նրանց մասնակցությունը: Ուսանողները մասակցել են միջազգային գիտաժողովների, կլոր սեղանների, վերապատրաստումների և այլն:

2021 թվականի ամռան ընթացքում ֆակուլտետի 4 ուսանողներ ակտիվորեն մասնակցել են Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման ծրագրին, որի ընթացքում արժանացել են բարձր գնահատականի:
«Հոգեբանություն» բակալավրի ՄԿԾ-ի 3_րդ կուրսի ուսանող Սասուն Տոնապետյանը հեռավար ձևաչափով մասնակցել է ,,International Scientific Review of the Problems and Prospects of Modern Science and Education´´ խորագրով միջազգային գիտաժողովի (LXXXII INTERNATIONAL SCIENTIFIC AND PRACTICAL CONFERENCE, USA,Boston, Jule 23,2021): Ինչպես նաև մասնակցել և 2-օրյա ընտրական դպրոցի հավաստագիր է ստացել /UNDP, Funded by UK Governement Certificate of of completion presented to Sasun Tonapetyan , In recognition of comletion of the 2 - day electoral school in Armavir on 30 October 2021-01 November 2021/:
«Հոգեբանություն» ՄԿԾ-ի 4_րդ կուրսի ուսանողուհի Լարա Ավետիսյանը 2021 թվականի հոկտեմբերի 7-8-ը մասնակցել է «Մաթեմատիկական կրթություն» խորագրով 9-րդ միջազգային գիտաժողովին:
«Հոգեբանություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Գևորգյանը 2021 թվականի մասիի 7-ին մասնակցել է «Սկզբնական կրթության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային առցանց գիտաժողովին՝ հանդես գալով «Նախադպրոցական տարիքի երեխաների դպրոցամուտի ճգնաժամը և հաղթահարման հոգեբանամանկավարժական ուղիները» թեմայով /ղեկավար՝ Մ.Գևորգյան/: 2021 թ., նոյեմբերի 20-ին մասնակցել է նաև Երևանում Ռուսական տան կողմից կազմակերպված “Читаем русскую поэзию об Армении” խորագրով միջոցառմանը:
Սոցիոլագիա մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Անի Թադևոսյանը մասնակցել է ՄԱԿ-ի Զարգացման «Ավագ դպրոցականների առաջնորդության առցանց դպրոց»-ին և իրականացրել է իր ծրագիրը իր համայնքում: Առաջնորդության դպրոցները կազմակերպվում են «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՕքսՖԷՄ հիմնադրամի հետ համագործակցությամբ, Մեծ Բրիտանիայի «Լավ կառավարման հիմնադրամի» ֆինանսական աջակցությամբ: Դպրոցին մասնակցում են 16-18 տարեկան շուրջ 19 երիտասարդներ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի տարբեր համայնքներից: Իրականացրել է ´´Գործող բանալի´´ երիտասարդական ծրագիրը Գանձակ և Կարմիրգյուղ համայնքներում: Ծրագրին մասնակցել են տվյալ համայքների 14-18 տարեկան ակտիվ երիտասարդները, ովքեր կարողացել են իրենց տեսնել առաջնորդի դերում, ծանոթացել մեդիագրագիտությանը և մասնակիցներից շատերը կողմնորոշվել են մասնագիտության ընտրության հարցում: 2021 թվականի օգոստոս ամսին մասնկցել է «Համայնքը ես եմ» համայնքային երիտասարդ առաջնորդների ճամբարին, որը իրականացվել է ՄԱԶԾ «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի կողմից՝ Մեծ Բրիտանիայի «Լավ կառավարման հիմնադրամի» ֆինանսական աջակցությամբ, և «Կանայք և երիտասարդները նորարար համայնքային զարգացման գործընթացներում» ծրագրի կողմից՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսական աջակցությամբ: Երկու ծրագրերն էլ իրականացվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ: Ծրագրին մասնակցում են ՀՀ բոլոր մարզերը և Երևանը ներկայացնող շուրջ 80 երիտասարդներ: 201 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մասնակցել է առցանց վերապատրաստման դասընթացների Ուելսի համալսարանում՝ ´´Գլոբալ սոցիոլոգիա´´ թեմայով:
Սոցիալական մանկավարժություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Պետրոսյանը 2021 թվականի հունիսին

- մասնակցել է համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի և «Քայլ առ քայլ» ԲՀ-ի կողմից «Արտակարգ իրավիճակներում խնամքի, զարգացման և կրթության ծառայությունների տրամադրումը» ծրագրի շրջանակներում իրականացված նախադպրոցական ոլորտի մասնագետների վերապատրաստման 5-օրյա դասընթացին /ստացել է հավաստագիր/:

· մասնակցել է «Արտակարգ իրավիճակներում խնամքի, զարգացման և կրթության ծառայությունների տրամադրումը» ծրագրի շրջանակներում իրականացված նախադպրոցական ոլորտի մասնագետների վերապատրաստողների վերապատրաստման 2-օրյա դասընթացին /ստացել է հավաստագիր/:

· Մանսակցել է vhs DVV International-ի կողմից կազմակերպված «ԿԶՆ Կանգառ Սևանում» երիտասարդական ֆորումին, որը տեղի է ունեցել 2021 թվականի նոյեմբերի 27-ին Սևան քաղաքում՝ «Մեծահասակների կրթությունը ի նպաստ կայուն զարգացման նպատակների» խորագրով:

«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» մասնագիտության մագիստրոսի կրթության 2-րդ կուրսի ուսանողուհի Եվա Բրիկյանը 2021 թվականի դեկտեմբերի 8-ին զեկույց է ունենալու Ռուս-հայկական համալսարանի XV տարեկան միջազգային գիտաժողովին «Դեռահասության տագնապայնության և հուզական անկայունության հաղթահարման ուղիները ռազմական դրության պայմաններում» թեմայով:

«Զինվորական հոգեբանություն» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Ջուլիետա Գրիգորյանը 2021 թվականի նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 1-ը մասնակցել է վերապատրաստման դասընթացների /առցանց/՝ «Организация работы с молодежью на пространстве СНГ» /г.Екатеринбург/:

«Ընտանիքի հոգեբանություն» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Մերի Յովասափյանը 2021 թվականի դեկտեմբերի 1-2-ին մասնակցել է «Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում» խորագրով միջազգային գիտաժողովին /Երևան/, զեկույցի թեմա՝ 1-2-րդ կուրսի ուսանողների ուսումնական գործունեության շարժառիթները: «Կլինիկական հոգեբանություն եւ հոգեթերապիա» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Նաիրա Սողոմոնյանը նույն գիտաժողովում հանդես է եկել «Երիտասարդների արժեքային կողմնորոշումների առանձնահատկություններն ու դրանց սեռային տարբերությունները» թեմայով զեկույցով:

«Ընտանիքի հոգեբանություն» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Խանոյանը մասնակցել է գիտաժողովների և անցել վերապատրաստում՝

- <<Յոգեկան առողջությունն ու սոցիալ-հոգեբանական աջակցությունն արտակարգ իրավիճակներում. մոտեցումներ, ուղեցույցներ, լավագույն փորձ>> 08.06.2021թ.-10..06.2021թ., 14.06.2021թ. (Լիդիա Կասանչուկ)
- <<Ամպուտացիայի և պրոթեզավորման հոգեբանական ասպեկտները. գնահատման և բուժման ռազմավարություններ>> լեզուն՝ անգլերեն-հայերեն, 26.04.2021թ.,
- Յայ-ամերիկյան հոգեկան առողջության ասոցիացիայի կողմից կազմակերպված կոնֆերանս, 17.04.2021թ.-18.04.2021թ.
- Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի ֆինանսավորմամբ <<Մրցունակ մասնագետներ, որակյալ ծառայություններ>> 4-ամսյա վերապատրաստում, 2021թ. մայիս-օգոստոս:

Միջազգային և արտաքին գործունեության շրջանակներում 2021-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հիմնական նպատակն է ապահովել համալսարանի միջազգային կապերի համակողմանի զարգացումը, խթանել ՀՊՄՀ գործունեության միջազգայնացումը:

Խնդիր *1.* Ընդլայնել և բազմազանեցնել համալսարանի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները արտասահմանյան համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ

- Բազմազանեցնել համագործակցության ուղղությունները արտասահմանյան համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ, խթանել ֆակուլտետի ՊԴԱ ներգրավվածությունը
  կրթական, հետազոտական և կարողությունների զարգացման, միջազգային դրամաշնորհային ծրագրերում, նպաստել երկարաժամկետ համագործակցության պայմանագրերի կնքմանը:
- Բարձրացնել առցանց միջազգային գործունեություններում ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունը /դասախոսություններ, ուսանողների փոխանակումներ, համաժողովներ, սեմինարներ, միջմշակութային շփումներ/
- Բարձրացնել ֆակուլտետի ներգրավվածությունը միջազգայնացման գործընթացներում՝ նպաստելով ՊԴԱ վերապատրաստումների կազմակերպմանը ՀՊՄՀ-ում և համագործակից արտասահմանյան ԲՈՒՀ-երում:
- Խթանել համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման և շարժունության ծրագրերին
- Բարձրացնել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի տեղեկացվածությունը միջազգային ծրագրերի, գիտաժողովների, դրամաշնորհային և կրթաթոշակային ծրագրերի մասին՝ տեղեկատվության տարածման և խորհրդատվությունների միջոցով:

ԽՆԴԻՐ *2.* Ընդլայնել համալսարանի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել համալսարանի ներգրավմանը եվրոպական և եվրասիական հետազոտական տարածքին:

- Խթանել ֆակուլտետի հետազոտողների ընդգրկմանը տարբեր միջազգային գիտական նախագծերում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը

ԽՆԴԻՐ *3.* Նպաստել օտարերկրյա ուսանողների համակազմի աճին ՀՊՄՀ-ում: Բարձրացնել ՀՊՄՀ-ը տեսանելիությունը միջազգային կրթական տարածքում:

- Ապահովել նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ֆակուլտետում օտարերկրյա ուսանողների լիարժեք ինտեգրման համար:
- Բարձրացնել արտասահմանյան ուսանողներին տրամադրվող ծառայությունների որակը՝ խթանելով վարչական անձնակազմի մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին:

## X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:**

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում և ամբիոններում որակի ապահովման պատասխանատուների կողմից 2020-2021 ուսումնական տարում կազմվել է միջոցառումների պլան, ըստ որի կազմակերպվել են հետագա աշխատանքները:

Որակի ապահովման գործընթացների կառավարման շրջանակներում կազմակերպվել են ֆակուլտետային և ամբիոնային առցանց քննարկումներ ֆակուլտետի ենթակառուցվածքային ստորաբաժանումների /ամբիոնների/ գործունեության արդյունավետության բարձրացման ուղիների, Համալսարանի 2020-2025թթ զարգացման ռազմավարական ծրագրի 2021թ. ֆակուլտետի ԳՊ-ի քայլերի իրականացման ընթացքի վերաբերյալ համավարակի, հատկապես համավարակի և առցանց ուսումնական գործընթացի կազմակերպման պայմաններում /հիմք՝ ամբիոնների նիստերի արձանագրությունները, ռեկտորատի զեկույցները/:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում և կրթական ծրագրերի պատասխանատու ամբիոններում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Ուսումնական գործընթացի որակի ապահովման մոնիտորից, վերլուծություն և ներկայացում ֆակուլտետի խորհրդի և ռեկտորատի նիստերին:

Ամբիոններում իրականացվել են՝

1. Որակի ապահովման գործընթացների կառավարման ընթացիկ հարցերի քննարկում /,

Հաշվետու տարում առկա համակրգում առաջնորդվել Google Classroom հարթակում դասախոսների մշտադիտարկման հետևյալ բաղադրիչներով.

- ✔ Առարկայական նկարագրի տեղադրում - 10%
- ✔ Թեմատիկ տրոհում - 20%
- ✔ Դասախոսությունների առկայություն - 50%
- ✔ Գնահատվող հանձնարարությունների տեղադրում (1 կամ 2 աշխատանք) - 20% [Հիմք.2021թ. օգոստոսի 21, արձանագրություն 1]

2. Բարելավվել են բակալավրի և մագիստրատուրայի ՄԿԾ-երը, վերանայվել են առարկայական նկարագրերը

3. Ամբիոնների ուսումնական գործունեության վերլուծություն, մասնավորապես «Google Classroom» հարթակում առցանց դասերի առավել նպատակահարմար իրականացման առաջարկներ և քննարկումներ,

4. Ամբիոնի հետազոտական գործունեության վերլուծություն, մասնավորապես` կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների, չափանիշների, ժամկետների քննարկում և վերանայում :

5. Քննարկվել են ընտրովի դասընթացների բովանդակային նյութերի բարելավման և փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը:

Իրականացվել են նաև՝

1. Մասնագիտական կողմնորոշման նպատակով հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների հետ միջոցառումների կազմակերպման աշխատանքների քննարկում և բաց դռներ միջոցառումներ:

2. Կրթական ոլորտի հարցերի վերաբերյալ ծրագրերի մշակում, համապատասխան աշխատանքային խմբի ստեղծում:

**Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:**

Որպես շահակից կողմ ֆակուլտետի ներքին ապահովման հանձնախմբերում, ինչպես նաև ֆակուլտետային քննարկումներում ներգրավվել են դասախոսներ, ուսանողական համայնքի ներկայացուցիչներ: Գործընթացն առավել արդյունավետ կազմակերպվելու համար անց են կացվել տեղեկատվական և ուսուցողական առերես և առցանց հանդիպումներ:

Ֆակուլտետի ՊԴԱ կազմում ներգրավված են նաև գործատուներ, ոլորտի լավագույն պրակտիկ մասնագետներ, ինչը միտված է ֆակուլտետ-գործատու համագործակցության ընդլայնմանը, ուսանողների ուսումնական գործընթացի, մասնավորապես պրակտիկաների կազմակերպման, տեսականի և գործնականի համադրման, ուսանողների հետագա աշխատանքային գործունեության և մասնագիտական կայացման գործընթացների արդյունավետության ապահովմանը